Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ արևելագիտությունն ունի բազմադարյան տրադիցիաներ։ Նրա ակունքները սկիզբ են առնում հինգերորդ դարից, երբ հայ գրի ստեղծումով հիմք դրվեց նաև պատմական գիտությանը։

Հանդիսանալով Առաջավոր Ասիայի պատմական առաջընթացի հնագույն և ակտիվ մասնակիցներից մեկը և կարևոր դեր խաղալով աշխարհի այդ շրջանի տնտեսության և մշակույթի զարգացման գործում, հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից ի վեր սևեռուն հետաքրքրություն է դրսևորել ոչ միայն իր հարևան ժողովուրդների հանդեպ, որոնց հետ ունեցել է բազմապիսի պատմական կապեր, այլև աշխարհագրական տեսակետից Հայաստանից հեռու գտնվող երկրների ու ժողովուրդների նկատմամբ։ Դրան, անշուշտ, զգալիորեն նպաստել է այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվել է Ասիայի և Եվրոպայի միջև առևտրական-քարավանային ճանապարհների խաչմերուկում և կապող օղակ է հանդիսացել այդ երկու մայրցամաքների միջև, որն անխուսափելիորեն նպաստել է հայերի առևտրական-քաղաքական և մշակութային շփումներին ամենատարբեր ազգերի ու ժողովուրդների հետ։ Ճիշտ է, այդ կապերի մասին բազմաթիվ գրավոր հուշարձաններ անհետ կորել ու չեն հասել մեզ, սակայն փրկված բեկորներից և մեզ հասած բազում հիշատակարաններից, մանր ժամանակագրություններից, գրավոր մատյաններից և վերջապես մեր պատմիչների աշխատություններից տեղեկանում ենք, որ հայ գիտնականները, մտածողները և քաղաքական գործիչները կուլտուրական և գործարար կապերի մեջ են եղել Արևելքի ժողովուրդների հետ։ Միջնադարի հայ պատմական մտքի խոշորագույն ներկայացուցիչները, սկսած քերթողահայր Մովսես Խորենացուց և վերջացրած Առաքել Դավրիժեցիով, բազմաթիվ մեծարժեք տեղեկություններ են հաղորդում Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների պատմության առանձին էտապների, աշխարհագրության, տնտեսության, մշակույթի և հոգևոր կյանքի մասին։ Այդ տվյալներն այսօր մեծապես օգնում են մեր հարևան ժողովուրդներին վերականգնելու իրենց պատմության չլուսաբանված էջերն ու մթին ծալքերը։ Իզուր չէ, որ իրանական ականավոր գրականագետ պատմաբան Սայիդ Նաֆիսին գտնում է, որ առանց հայկական աղբյուրների դժվար է ամբողջապես վերականգնել Իրանի հնագույն և միջնադարյան պատմությունը, հատկապես պարթևական և սասանյան շրջանների քաղաքական և հոգևոր կյանքի պատմությունը։ Նույն միտքը Թուրքիայի պատմության վերաբերյալ կրկնում է նաև թուրք պատմաբան Ֆ. Օրքունը. «Թուրքը պատմություն է կերտել, բայց չի գրել այն։ Հետևաբար, Թուրքիայի պատմությունը ուսումնասիրելու համար այլ աղբյուրների թվում կարևոր նշանակություն ունեն նաև հայկական աղբյուրները»,— գրում է նա։

Հայկական աղբյուրների արժեքը ոչ միայն Արևելքի երկրների պատմության առանձին հարցերի մասին եզակիության մեջ է, այլև առաջին հերթին

փաստերի հավաստիության մեջ։ Դրանով է պայմանավորված այն, որ XIX դարից սկսած Եվրոպայում մեծ հետաքրքրություն առաջացավ Արևելքի մասին հայկական աղբյուրների նկատմամբ։

Այդ դարաշրջանում, երբ ուժեղացավ եվրոպական պետությունների կողմից դաղութային շահագործման պրոցեսը և Արևելքը վերածվեց Արևմուտքի կապիտալիստական երկրների ծավալուն հարձակման օբյեկտի, արևելագիտությունը ձեռք բերեց նաև պրակտիկ նշանակություն։ Հենց դա էր պատճառը, որ Եվրոպայում գիտության այդ ճյուղը սկսեց ապրել աննախընթաց զարգացում։ Եվրոպական մայրաքաղաքներում ստեղծվեցին մի շարք խոշոր արևելագիտական կենտրոններ, որոնք կոչված էին ուսումնասիրելու Արևելքի երկրների և ժողովուրդների պատմությունը, տնտեսությունը, մշակույթը. կրոնները, մի խոսքով այդ ժողովուրդների նյութական և հոգևոր կյանքի բոլոր կողմերը։

Այս ընդհանուր հետաքրքրությունը Արևելքի նկատմամբ համակեց նաև հայ գիտնականներին։ Եվրոպայի և Ասիայի մի շարք խոշոր կուլտուրական կենտրոններում ստեղծվեցին ուշագրավ ու հետաքրքիր արևելագիտական և հայագիտական օջախներ, որտեղ հայ գիտնականները ծավալեցին բեղմնավոր գործունեություն՝ իրենց ավանդը ներդնելով համաշխարհային արևելագիտության զարգացման գործում։

Հայ արևելագիտության պատմության մեջ հատկապես անգնահատելի մեծ դեր է խաղացել 1815 թ. Մոսկվայում կազմակերպված Լազարյան Ճեմարանը, որը հայկական և ռուսական մշակույթի խոշորագույն և հետաքրքիր օջախներից մեկն էր։ Այս գիտական և ուսումնական հաստատության հետ կապված գիտության այնպիսի անխոնջ մշակների անունները, ինչպիսիք են Ս. Նազարյանը, Ն. Էմինը, Կ. Պատկանյանը, Գ. Քանանյանը, Լ. Բուդաղովը, Գ. Խալաթյանցը, Լ. Մսերյանցը և ուրիշներ։

Ի դեպ Ռուսաստանում հայ արևելագետները լայն գործունեություն էին ծավալել նաև Պետերբուրգի համալսարանում։

Ճակատագրի բերումով նախասովետական շրջանում ինչպես ողջ հայ մտավորականությունը, այնպես էլ հայ-արևելագետ գիտնականները հարկադրված էին աշխատել հայրենիքից դուրս, օտար երկնակամարների տակ, ցիրուցան և անկարող միավորելու իրենց ջանքերը հայ գիտությունն ու մշակույթը զարգացնելու համար։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը հնարավորություն տվեց աշխարհի տարբեր ծագերում ցրված հայությանը ունենալ ոչ միայն հայրենիք ու պետականություն, այլև հայրենի մտքի ու գիտության կաճառներ։ Երևանի նորաստեղծ պետական համալսարանում կազմակերպված մի շարք ֆակուլտետների հետ մեկտեղ հիմնադրվեց նաև բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժին, որտեղ դասախոսական և գիտահետազոտական աշխատանք են կատարել այնպիսի ականավոր հայագետ-արևելագետներ, ինչպիսիք են Հր. Աճառյանը, Լեոն Հ. Մանանդյանը, Դ. Լափանցյանը և ուրիշներ։

1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումից հետո, օրակարգի հարց դարձավ նաև հատուկ արևելագիտական կենտրոն ունենալը։ Այդ պատճառով 1954 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվեց Մերձավոր և Միջին արևելքի

երկրների նոր և նորագույն շրջանի պատմության խումբ, որը բազա էր հանդիսանալու հետագայում հատուկ արևելագիտական կենտրոն ստեղծելու համար։ Այդ փոքրաթիվ խումբը, որի աշխատանքները ղեկավարում էր ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, մի քանի տարվա ընթացքում մշակեց Իրանի, Թուրքիայի և արաբական երկրների պատմության և տնտեսության առանձին հրատապ պրոբլեմներ և հրատարակեց մի շարք հետաքրքիր աշխատություններ։

1957 թ. հունիսին Տաշքենդում գումարված արևելագետների համամիութենական առաջին կոնֆերանսում հայ արևելագետների հաղորդումները Հայաստանում արևելագիտական հետազոտությունների և այդ գիտության զարգացման հեռանկարների մասին առաջ բերեց սովետական ճանաչված արևելագետների աշխույժ հետաքրքրությունը մեր հանրապետության նորաստեղծ արևելագիտական բջիջի նկատմամբ։ Առաջարկություններ եղան Հայաստանում հատուկ արևելագիտական կենտրոն ստեղծելու վերաբերյալ։

1958 թ. հոկտեմբերին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը վերոհիշյալ խմբի բազայի վրա կազմակերպեց ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորը։ Սեկտորի վարիչ նշանակվեց ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։ 1959 թ. առ այսօր սեկտորի աշխատանքները ղեկավարում է պատմական գիտությունների թեկնածու Հ. Գ. Ինճիկյանը։

Սեկտորն իր կազմակերպման պահին ուներ ընդամենը 17 գիտական աշխատակից։ Հետագա տարիների ընթացքում նրա աշխատակիցների թիվը համարյա եռապատկվեց։ Այժմ սեկտորում աշխատում են երեք գիտության դոկտորներ և 24 թեկնածուներ, որոնց շարքերը մշտապես համալրվում են նոր գիտության թեկնածուներով և բարձր որակավորում ունեցող մասնագետներով։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ արևելագիտության սեկտորում ստեղծվել են հետևյալ բաժինները. թուրքագիտական, իրանագիտական, արաբական երկրների, քրդագիտական, ինչպես նաև գիտական ինֆորմացիայի և աղբյուրների հրատարակության խմբեր։

Սեկտորի կողմից ուսումնասիրվող պրոբլեմներն աչքի են ընկնում թե՛ իրենց ընդգրկման ծավալով և թե՛ թեմաների բազմազանությամբ։ Հայ արևելագետների առջև գրվել են հետևյալ հիմնական խնդիրները. լուսաբանել Թուրքիայի, Իրանի և արաբական երկրների պատմության, տնտեսության և մշակույթի առանձին հրատապ և հետաքրքիր պրոբլեմները, գաղափարախոսական ուղղությունները, ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը, յուրաքանչյուր երկրի տարբեր դասակարգերի միջև սոցիալական, քաղաքական և գաղափարական պայքարի ձևերը, այդ երկրների ներսում ազգային հարաբերությունները. հատուկ ուշադրություն դարձնել Մերձավոր և Միջին արևելքի երկրներում ծավալվող ազգային-ազատագրական ու դեմոկրատական շարժումների, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և ազգային անկախության համար մղված պայքարի պատմությանը, ցույց տալ այդ երկրների զարգացման յուրահատկությունները, նրանց տնտեսության մեջ արևմտյան կապիտալի ներթափանցման ձևերը, իմպերիալիստական պետությունների ձգտումները լոկալ բնույթի ռազմական ագրեսիվ բլոկներ ստեղծելու և դրանք իրենց իմպերիալիստական նպատակներին ծառայեցնելու ուղղությամբ։ Հատուկ ուսումնասիրության առարկա են հանդիսանում Մերձավոր և Միջին

արևելքի երկրների միջպետական հարաբերությունների, Սովետական Միության հետ ունեցած նրանց տնտեսական և քաղաքական կապերի հարցերը։ Բացի այս ընդհանուր արևելագիտական պրոբլեմներից, սեկտորի գիտահետազոտական թեմատիկայում զգալի տեղ են գրավում նաև հայ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների միջև եղած պատմական և մշակութային կապերի, Արևելքի մի շարք երկրներում հայկական հին ու նոր գաղութների պատմության լուսաբանման հարցերը։

Այս տարի, երբ լրանում է Հայաստանում ստեղծված առաջին ինքնուրույն արևելագիտական կենտրոնի՝ արևելագիտության սեկտորի հիմնադրման 10 տարին, արժե հակիրճ՝կանգ առնել այն նվաճումների վրա, որ ձեռք են բերվել հայ արևելագետների կողմից։

Սեկտորը մեկ տասնամյակի ընթացքում հրատարակել է ավելի քան 40 մենագրություններ և ուսումնասիրություններ, ինչպես նաև հանրապետական, միութենական և արտասահմանյան գիտական հանդեսներում հարյուրից ավելի հոդվածներ։

Այս ակնառու հաջողությունները կարճ ժամանակամիջոցում նպաստեցին սեկտորի ճանաչմանը սովետական և արտասահմանյան արևելագիտական խոշոր կենտրոնների կողմից։

Ինչպես արդեն նշվեց լայն ու բազմակողմանի է սեկտորի հետաքրքրությունների շրջանակը։

Նրա առաջատար բաժիններից մեկի՝ թուրքագիտական բաժնի ջանքերով մշակվել և հրատարակվել են մի շարք մենագրություններ և արժեքավոր հոդվածներ, որոնցում բացահայտվում են Օսմանյան կայսրության, մասնավորապես երիտթուրքական կառավարության մոլի շովինիստական ներքին քաղաքականությունը և օսմանիզմի, պանթուրքիզմի և պանիսլամիզմի ռեակցիոն գաղափարախոսությունների վրա կառուցված զավթողական արտաքին քաղաքականությունը։ Մասնավորապես սուր քննադատության է ենթարկվում ժամանակակից թուրքական պատմագրության մեջ տիրապետող ռեակցիոն, պանթուրքիստական ուղղությունը, որն արդարացնում է Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վարած շովինիզմի և գենոցիդի քաղաքականությունը։

Սեկտորի թուրքագետները իրենց առաջնահերթ խնդիրն են համարում նաև մերկացնել թուրք պատմաբանների կողմից հայ ժողովրդի և մյուս ոչ թուրք ժողովուրդների պատմությունը նենգափոխելու և խեղաթյուրելու փորձերը։ Այդ հարցին են նվիրված «Հայ ժողովրդի նոր պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ», «Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին», «Քննական տեսություն քրդերի թուրանա-թուրքական ծագման վարկածի մասին», «Մերձավոր արևելքի ժողովուրդների էթնոգենեզի հարցերը պանթուրքիստական պատմագրության լուսաբանությամբ» և մի շարք այլ աշխատություններ։ Գովելի է, որ այս հարցերով արևելագիտության սեկտորից բացի զբաղվում է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, մի հանգամանք, որը հնարավորություն է տալիս միավորել արևելագետների և հայագետների ջանքերը՝ հակահարված տալու թուրքական ռեակցիոն շովինիստական հակագիտական կեղծարարական «տեսություններին»։

Վերջին տարիներս սովետական արևելագետների կողմից բազմակողմանի քննության է ենթարկվում Արևելքի երկրների ագրարային հարաբերությունների հարցը։ Այդ ուղղությամբ ևս սեկտորը ձեռք է բերել նշանակալի հաջողություններ։ Մի շարք հրատարակված աշխատություններում մանրաղնին վերլուծվել են Արևելքի մի շարք երկրներում հողատիրության և հողօգտագործման ձևերը, հարկային սիստեմը, գյուղացիության շահագործման եղանակները և ագրարային-գյուղացիական հարցի հետ կապված մի շարք այլ հարցեր, հայ արևելագետները փորձել են ցույց տալ այս կամ այն երկրում ֆեոդալական կարգերի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների՝ գյուղատնտեսության մեջ ներթափանցման պրոցեսը։ Դա անտարակույս ինչ-որ չափով կօգնի սովետական արևելագետ պատմաբաններին բացատրել Արևելքում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պատճառները, մեկնաբանելու այս կամ այն երկրի քաղաքական պատմության դեռևս բավարար չափով չլուսաբանված հարցերը և կամ առանձին դասակարգերի ու խավերի գաղափարախոսության ու վարքագծի մեջ առաջին հայացքից անհասկանալի ու տարօրինակ թվացող հանգամանքները։

Սեկտորում արդեն առաջին հաջող քայլերն են կատարված Արևելքի մի շարք երկրներում հասարակական-քաղաքական մտքի և գաղափարական ուղղությունների հարցերը ուսումնասիրելու տեսակետից։ Հայ արևելագետներին, օրինակ, հուզում է այն կարևոր և այժմեական նշանակություն ունեցող հարցը, թե ինչ դեր է խաղացել ու խաղում մահմեդական կրոնը և նրա սկզբունքների վրա կառուցված գաղափարախոսությունները առանձին ժողովուրդների թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական պատմության բնագավառում, ինչպե՞ս, ի՞նչ ուղիներով է ձևավորվել բուրժուական գաղափարախոսությունը, ինչպես ։ այն ազդել տվյալ ժողովրդի մշակույթի վրա և այլն։ Հիրավի, դժվար է գերագնահատել այս հարցերի լուսաբանման կարևորությունը մեր օրերում։ Այս իսկ տեսակետից սեկտորում կատարվում է օգտակար աշխատանք, որն ունի ոչ միայն զուտ գիտական նշանակություն, այլև գործնական քաղաքական իմաստ։

Այսօր բազմազգ, բազմալեզու և բազմակրոն Արևելքի պայմաններում կարևորագույն հարցերից մեկն է նաև ազգային հարցը։ Սեկտորում հատուկ ուշադրությամբ ուսումնասիրվում է հատկապես ազգային հարցի պրոբլեմը Թուրքիայում, ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ հանրապետական Թուրքիայի տիրապետության տարիներին։ Այս պրոբլեմը իր լուսաբանումն է գտել մի շարք աշխատություններում։ Այսպես, «Ազգային փոքրամասնությունների վիճակը Թուրքիայում», «Երիտթուրքական կառավարության ազգային քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին», «Երիտթուրքերի ազգային քաղաքականության արտացոլումը թուրքական և արևմտյան բուրժուական պատմագրության մեջ» և այլն։ Այստեղ ավելորդ չէ նշել, որ հայկական աղբյուրները Թուրքիայում ազգային հարցի մասին պարունակում են չափազանց հարուստ տվյալներ, այդ հանգամանքը, անշուշտ, ազգային հարցը ուսումնասիրող սովետական մասնագետների շրջանում հայ պատմաբաններին գնում է գերադասելի վիճակում։ Իրանի ազգային հարցին նվիրված աշխատություններում վերլուծության են ենթարկվում այդ երկրում առանձին ժողովուրդների և ցեղերի էթնիկական զարգացման առանձնահատկությունները, էթնոգենեզը, ցեղային հարաբերությունների քայքայման պրո-

ցեսը և լուսաբանվում է իրանական ժողովուրդների, ցեղերի ու էթնիկական խմբերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործունեությունը։

Սեկտորում լայնորեն լուսաբանվում է Մերձավոր և Միջին արևելքի երկրների միջազգային հարաբերությունների հարցը։ Մի շարք հրատարակված աշխատություններում փաստական հարուստ նյութի հիման վրա վեր են հանվում Իրանի, արաբական երկրների, Թուրքիայի միջազգային հարաբերությունների առանձին էտապները։ Հատուկ ուշադրություն է դարձվում ուսումնասիրվող երկրների միջպետական հարաբերություններին։ Այսպես, վերլուծության ենթարկելով Թուրքիայի հարաբերությունները հարևան երկրների, մասնավորապես Իրանի և Հունաստանի հետ, համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ արևմտյան քաղաքագետների կողմից «հիվանդ մարդ» հորջորջված Օսմանյան կայսրությունը բնավ չէր հրաժարվել արտաքին զավթումներ կատարելու իր ռազմաշունչ ձգտումներից։ Միանգամայն հերքվում է թուրքական և արևմտյան բուրժուական պատմագրության այն տեսակետը, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը մտահոգված էր միայն իր տերիտորիալ ստատուս-քվոն և սահմանների անձեռնմխելիությունը պահպանելու հարցով և բնավ չուներ արտաքին զավթողական նկրտումներ։ Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին թուրքական զորքերի զինված ինտերվենցիան իր հարևան երկրների՝ հատկապես Իրանի նկատմամբ, իսկ ապա նաև նրա մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին հանդիսանում է վերոհիշյալ տեսակետի լավագույն հերքումը։

Թուրքիայի ագրեսիվ-զավթողական քաղաքականության հարցը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի շրջանում, թուրքական «չեզոքության» առանձնահատկությունները, նրա գերմանական բլոկի երկրների հետ դաշինքի մեջ մտնելու պատճառները և այս կարգի այլ հարցեր իրենց համոզիչ մեկնաբանությունն են գտնում հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված «Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին» ծավալուն մենագրությունում։ «Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և պետությունները XIX դ. վերջին և XX դարի սկզբին» հրատարակության ներկայացված աշխատությունում նորահայտ արխիվային նյութերի հիման վրա լուսաբանվում է Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, հայերի ազգային-ազատագրական պայքարը, ցույց է տրվում իմպերիալիստական պետությունների հետապնդած շահերը Արևմտյան Հայաստանում, և վերջիններիս կողմից Հայ ժողովրդի պայքարի օգտագործումը Մերձավոր արևելքում իրենց դիրքերի ամրապնդման համար։

Նորագույն շրջանում իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Մերձավոր և Միջին արևելքում քննության է ենթարկվում «Արաբական արևելքն ու Եվրոպական ընդհանուր շուկան», «Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի ներթափանցումը Թուրքիա», «Մերձավոր և Միջին արևելքի երկրներում նոր նավթային կոնցեսիաները», «Արևմտագերմանական կապիտալի ներթափանցումը Թուրքիա», «Ագրեսիվ բլոկներ ստեղծելու հարցի շուրջը», «Թուրք-ֆրանսիական հարաբերությունը և Կիլիկիան 1919—1922 թթ.», «Ալեքսանդրետի սանջաքի պրոբլեմը և միջազգային դիվանագիտությունը 1936—1939 թթ.», «Իրանում անգլիական իմպերիալիստական

քաղաքականության պատմությունից 1918—1922 թթ.» և այլ աշխատություններում։

Հատուկ ուշադրություն է դարձվում սովետա-թուրքական հարաբերությունների տարբեր էտապների լուսաբանմանը։ «Անդրկովկասը և սովետա-թուրքական հարաբերությունները», «1925 թ. սովետա-թուրքական պայմանագրի հարցի շուրջը», «Թուրքիայի տնտեսական կապերը Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ» աշխատություններում վերլուծության են ենթարկվում սովետա-թուրքական հարաբերությունների պատմության առավել հետաքրքիր շրջանները և ցույց է տրվում այդ երկու երկրների տնտեսական կապերի ոչ միայն ընդհանուր կողմերը, այլև նրանց առանձնահատկությունները։ Սեկտորն իր պարտքն է համարում մերկացնել այն կեղծարարությունները, որոնք տեղ են գտնում սովետա-թուրքական հարաբերությունների պատմության վերաբերյալ արևմտյան և թուրքական հեղինակների աշխատություններում։ Այդ հարցին է նվիրված «Սովետա-թուրքական հարաբերությունների հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրքական պատմագրության մեջ» ուսումնասիրությունը։

Ներկայումս հայ արևելագետները լրջորեն զբաղվում են նաև Արևելքի ժողովուրդների տնտեսական զարգացման ուղիների պրոբլեմով, աշխատելով բացահայտել այդ պրոցեսի տենդենցներն ու առանձնահատկությունները։ «Բուրժուազիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները Օսմանյան Թուրքիայում» ուսումնասիրությունը նվիրված է Թուրքիայի տնտեսության տարբեր բնագավառներում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման կոնկրետ պատմական և տնտեսական պայմանների ուսումնասիրությանը։ Ցույց է տրվում, թե ինչպիսի դեր է խաղացել հայկական և հունական բուրժուազիան Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում։ Ուսումնասիրության մեջ բացահայտվում են նաև թուրքական բուրժուազիայի թուլության պատճառները և կարևոր տեղ է հատկացվում թուրքական և առհասարակ արևելյան բուրժուազիայի գաղափարախոսության և քաղաքականության հարցերի քննարկմանը։

Արևելքի երկրների ազգային և ազգային հարցերի, տնտեսական և սոցիալական զարգացման պրոբլեմների, իմպերիալիստական պետությունների քաղաքականության և ներքին ռեակցիայի գործունեության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական հեղափոխությունների և շարժումների էությունը, նրանց շարժիչ ուժերն ու նպատակները։ Այդ պրոբլեմին են նվիրված մի շարք ուսումնասիրություններ և հոդվածներ։ Սեկտորի կողմից հրատարակվել է «Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945—1963 թթ.)», «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թ.)», «Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին», «Քրդական ազգային-ազատագրական շարժումը Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» ուսումնասիրությունները։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո արևելքի երկրներում արևմտյան տերությունների կողմից սահմանված մանդատային սիստեմի իմպերիալիստական էության մերկացման և այդ սիստեմի դեմ ժողովուրդների պայ-

քարի պատմությանն են նվիրված մի շարք աշխատություններ, որոնցում մասնավորապես ցույց է տրվում Իրաքի և Սիրիայի դեմոկրատական ուժերի պայքարը հանուն անգլիական և ֆրանսիական մանդատային սիստեմի վերացման։

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ սեկտորի կողմից հրատարակության պատրաստված «Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը» ծավալուն կոլեկտիվ աշխատությունում լուսաբանվում են հեղափոխության մեծ առաջնորդի գաղափարների ազդեցությունը Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների վրա, ցույց են տրվում արաբական երկրների, Իրանի և Թուրքիայի դեմոկրատական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների կոնկրետ առանձնահատկությունները։

Խոսելով սեկտորում բարձրացվող քրդագիտական պրոբլեմների մասին, պետք է նշել, որ Սովետական Միության արևելագիտական հիմնարկությունների կողմից Հայաստանը արդեն ճանաչում է գտել որպես քրդագիտական առաջատար կենտրոն։ Այստեղ քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի, մասնավորապես հարուստ բանահյուսության ուսումնասիրման տեսակետից կատարվում է մեծ աշխատանք։

Հայաստանի պատմաբան-քրդագետները իրենց առաջնահերթ խնդիրն են համարում ուսումնասիրել Օսմանյան կայսրության դեմ քուրդ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունը, բացահայտել քրդերի ազգային-ազատագրական պայքարի արդի էտապը Իրաքում, ցույց տալ Սովետական Հայաստանի քրդերի նվաճումները սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բնագավառում, վեր հանել և ուսումնասիրել քրդական ժողովրդական բանահյուսության և գրականության հետաքրքիր էջերը։

Սեկտորում կատարված է առաջին փորձը քուրդ ժողովրդի ծագման պրոբլեմի որոշ ասպեկտները լուսաբանելու ուղղությամբ։ Արևելագիտության սեկտորը նախատեսել է նաև «Քուրդ ժողովրդի պատմությունը» ծավալուն աշխատությունը պատրաստելու գործը, որին մասնակցում են Սովետական Միության համարյա բոլոր ճանաչված քրդագետները։

Հայ արևելագիտությունը սերտ կապերի մեջ է գտնվում հայագիտության հետ։

Ինչպես հայկական աղբյուրներն են նպաստում Արևելքի ժողովուրդների պատմության կնճռոտ հարցերը լուսաբանելու գործին, այնպես էլ արևելյան աղբյուրները հարուստ նյութ են մատակարարում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ։

Սեկտորի աղբյուրների հրատարակության խմբի ջանքերով վերջին տարիներս հրատարակվել են մի շարք փաստաթղթերի ժողովածուներ։ Այսպես «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» քառահատոր աշխատության առաջին երեք հատորները (չորրորդ հատորը գտնվում է հրատարակության պրոցեսում), «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանի մասին», «XVIII դարի հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին» և այլն։

Սեկտորը ծրագրել է առաջիկայում հրատարակել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թուրքական ձեռագիր այն աղբյուրները, որոնք

նյութեր են պարունակում Հայաստանի և հայերի մասին, ինչպես նաև «Հայկական աղբյուրները Արևելքի երկրների մասին» փաստաթղթերի ժողովածուներ։ Արևելյան աղբյուրների հրատարակության գործը հաջողությամբ առաջ տանելու համար անհրաժեշտ է էլ ավելի զարգացնել սեկտորի և Մատենադարանի միջև գիտական համագործակցությունը։ Դա հնարավորություն կտա ոչ միայն կոորդինացնել այդ երկու գիտահետազոտական հիմնարկությունների աշխատանքները արևելյան աղբյուրները ուսումնասիրելու և հրատարակելու բնագավառում, այլև մեծապես կօգնի աղբյուրագետ-արևելագետների նոր որակյալ կադրեր պատրաստելու գործին, որի կարիքը չափազանց մեծ է մեր հանրապետությունում։

Միանգամայն հասկանալի է, որ հայ ժողովրդի պատմությունը ամբողջական տեսքով ներկայացնելու համար անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել նաև հայ գաղութների և հայ գաղթօջախների պատմությունը։ Առաջնորդվելով այդ գիտակցությամբ, ԴԱ պատմության ինստիտուտի գաղթօջախների պատմության սեկտորի հետ զուգահեռ, հայկական գաղթօջախների, մասնավորապես Մերձավոր և Միջին արևելքի երկրների գաղութների պատմության և մշակութային կյանքի ուսումնասիրությամբ զբաղվում է նաև արևելագիտության սեկտորը։ Վերջինիս ջանքերով արդեն մշակվել է Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Իրանի հայկական գաղութների պատմությունը։ Այս պրոբլեմը բարձրացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում այն հարցին, թե ինչպիսի դեր են խաղացել գաղութաբնակ հայերը այս կամ այն երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում և ինչպե՞ս, ի՞նչ ուղիներով են նպաստել համահայկական մշակութային կյանքի զարգացմանը։

Հայ արևելագետները բազմակողմանիորեն հետազոտում են նաև հայ-իրանական, հայ-արաբական, հայ-թուրքական լեզվական և գրական առնչությունները, հայ և հարևան ժողովուրդների պատմական և մշակութային կապերն ու փոխազդեցությունները։

Լուրջ ուշադրություն է դարձվում նաև հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ստեղծած հարուստ մշակութային ժառանգությունը ուսումնասիրելու և վեր հանելու գործին։ Այդ նպատակով սեկտորը ծրագրել է ուսումնասիրել հայատառ թուրքերենով հարուստ գրականությունը, թուրքալեզու հայ աշուղական գրականությունը, Արևմտյան Հայաստանում հայկական կրթական հաստատությունների գործունեությունը և այլն։

Արևելագիտության սեկտորի գիտական գործունեության մեջ զգալի տեղ է գրավում նաև Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների գրականության և լեզվի հարցերը ուսումնասիրելու պրոբլեմը։ Իրանագետ-բանասերների համար հետազոտության առարկա է հանդիսանում ժամանակակից իրանական առաջադիմական գրականությունը, այդ գրականության սոցիալական մոտիվները, XX դարի պարսկական արձակի և պոեզիայի առանձնահատկությունները և այլն։ Մեր գրականագետները հանդես են եկել հետաքրքիր հոդվածներով իրանական թատրոնի պատմության, հայ գրողների ստեղծագործությունների պարսկերեն լեզվով թարգմանությունների և մի շարք այլ հարցերի մասին։

Քրդագետ-գրականագետների հրատարակած աշխատություններից արժե հիշատակել «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ», «Քրդական ժողովրդական հեքիաթների» առաջին երկու հատորները (երրորդը գտնվում է հրատարակության պրոցեսում),

«Ջագաբխունի քաղաքացիական պոեզիան», «Ակնարկներ քրդական սովետական գրականության» ավարտված աշխատությունում փորձ է արվում ամփոփել հետհոկտեմբերյան շրջանում քրդական գրականության ձեռք բերած հաջողությունները։

Սեկտորի լեզվաբաններն իրենց աշխատություններում կարևոր տեղ են հատկացնում նաև բառարանագրության գործին։ Հրատարակության են պատրաստվել արաբերեն-հայերեն, պարսկերեն-հայերեն, քրդերեն-ռուսերեն-հայերեն բառարանները, սակայն առայժմ հաջողվել է կազմակերպել միայն արաբերեն-հայերեն բառարանի հրատարակության գործը։

Ներկայումս Հայաստանում բարձրորակ արևելագիտական կադրերի առկայությունը հնարավորություն է տալիս նախաձեռնել մի շարք ընդհանրացնող կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը, որոնցում կամփոփվեն հայ արևելագետների ուսումնասիրությունները։ Սեկտորը ծրագրել է մոտ ժամանակների ընթացքում հրատարակության պատրաստել «Օսմանյան կայսրությունը երիտթուրքերի տիրապետության շրջանում», «Իրանը իմպերիալիզմի դարաշրջանում», «Սիրիայի նորագույն պատմություն», «Ժամանակակից պարսից գրականությունը» կոլեկտիվ աշխատությունները։ Ծրագրված է նաև հրատարակել «Ուրվագծեր հայ արևելագիտության պատմության» ուսումնասիրությունը, որտեղ ի մի են բերվելու հայ արևելագիտության նվաճումները նախասովետական և սովետական շրջանում։

Սեկտորի ապագա գիտահետազոտական պլաններում ավելի մեծ տեղ է հատկացվելու այնպիսի պրոբլեմների ուսումնասիրությանը, ինչպիսիք են ասիական երկրների տնտեսությունը, այդ երկրների սոցիալական կյանքի ներքին օրինաչափությունները, միջպետական և միջազգային հարաբերությունները, ազգային-ազատագրական շարժումները, հասարակական մտքի և գաղափարական հոսանքների պատմությունը և այլն։ Բացի դրանից, սեկտորը պետք է խորանա նաև հայ և հարևան ժողովուրդների պատմական ու մշակութային կապի խնդիրների մեջ, ընդլայնի իր ինֆորմացիոն աշխատանքները, որպեսզի կարողանա օգնություն ցույց տալ թե՛ գիտական հիմնարկներին և թե՛ պետական օրգաններին՝ մի շարք հրատապ հարցերի լուծման կարևոր գործում։

Արևելագիտության սեկտորը լայնորեն գործակցում է նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի կողմից կոորդինացվող կարևորագույն կոմպլեքսային պրոբլեմների մշակմանը։ Այսպես, սեկտորի մի շարք աշխատակիցներ մասնակցել են ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի կողմից հրատարակած «Թուրքիայի նորագույն շրջանի պատմությունը» կոլեկտիվ աշխատությանը, «Ժամանակակից Թուրքիա» տեղեկատուին, «Թուրքական քաղաքական կուսակցություններն ու գործիչները» աշխատությանը և այլն։ Մեր աշխատակիցները ներկայումս ակտիվորեն մասնակցում են նույն ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստվող «Ժամանակակից Իրան» տեղեկատուին, ՍՍՀՄ ԳԱ Աֆրիկայի ինստիտուտի կողմից հրատարակության համար պատրաստվող հատուկ ժողովածուի համար շարադրում են «Հյուսիսային Աֆրիկայի հայկական գաղթօջախները»։ Բացի այդ, սեկտորի մի շարք աշխատակիցներ հեղինակ են «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի առանձին բաժինների, սեկտորի մասնակցությամբ պատրաստվել և հրատարակվել

է «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուն։

Հայ արևելագետները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում միջազգային և համամիութենական գիտական կոնգրեսներին, կոնֆերանսներին և նստաշրջաններին։ 1960 թ. Մոսկվայում կայացած արևելագետների համաշխարհային 25-րդ կոնգրեսում Հայաստանի գիտնականները հանդես եկան 13 գիտական զեկուցումներով և մասնակցեցին գիտական բանավեճերին։ Սեկտորի աշխատակիցները մասնակցել են նաև 1962 թ. մայիսին Բաքվում կայացած Աֆղանիստանի, Իրանի և Թուրքիայի նոր և նորագույն շրջանի պատմության և տնտեսության պրոբլեմներին նվիրված համամիութենական գիտական նստաշրջանին, 1963 թ. Ֆրիլիսիում գումարված արևելագիտական հիմնարկների գիտական խորհուրդների համատեղ նիստին, 1963 թ. Լենինգրադում անցկացված արաբագետների համամիութենական երկրորդ կոնֆերանսին, իսկ 1965 թ.՝ երրորդ կոնֆերանսին, 1967 թ. «ՍՍՀՄ և Մերձավոր ու Միջին արևելքի երկրները» համամիութենական գիտական նստաշրջանին, ՍՍՀՄ ԳԱ և Ասիայի ու Աֆրիկայի երկրների համերաշխության սովետական կոմիտեի կողմից Բաքվում կազմակերպած «Մեծ Հոկտեմբերը և Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները» միջազգային գիտական կոնֆերանսին և մի շարք այլ համամիութենական ու միջազգային այլ կոնֆերանսների ու նստաշրջանների։

Տարեցտարի ընդլայնվում են սեկտորի գիտական կապերն ու գրքափոխանակությունը արտասահմանյան մի շարք երկրների արևելագիտական կենտրոնների, համալսարանների և առանձին գիտնականների հետ։

Այդ կապերի ընդլայնումը մեծապես նպաստում է սեկտորի մասնագիտական գրադարանի հարստացմանը, որը ներկայումս պարունակում է մի քանի հազար կտոր գրականություն, այդ թվում նաև օտար լեզուներով այնպիսի գրքեր, որոնք եզակի են Սովետական Միությունում։

Այսօր արևելագիտությունը Հայաստանում կատարում է խոշոր առաջընթաց քայլեր։ Հանրապետությունում գիտության այդ բնագավառի հետագա զարգացման համար, անշուշտ, մեծ խթան կհանդիսանա նաև այս տարի Երևանի պետական համալսարանում կազմակերպված արևելագիտության ֆակուլտետը և ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում հիմնադրված Հին արևելքի բանասիրության և պատմության խումբը։

Հայ արևելագիտության հարուստ տրադիցիաները հիանալի հիմք են հանդիսանում սովետահայ արևելագիտության հետագա զարգացման ու առաջընթացի համար։